

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄ**

24 հունիսի 2022 թվականի թիվ 42-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ԹԻՎ 03-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 10 կողմ, — դեմ, — ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն համարվող գույքի (հողամասերի, շենքերի և շինությունների) օտարման 2022 թվականի ծրագիրը հաստատելու մասին» թիվ 03-Ա որոշման մեջ կատարել լրացումներ և որոշման հավելվածը լրացնել 25-ից 31 կետերով՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -10

Դեմ 0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Ա.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

ԳԵՎԴԻՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏԱՆ Հ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա. *[Signature]*  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ. *[Signature]*  
ՀՈԿԱՆՆԻՅԱՆ Գ. *[Signature]*  
ՀՈԿԱՆՆԻՅԱՆ Է. *[Signature]*  
ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա. *[Signature]*  
ՊՈՂՈՍՅԱՆ Կ. *[Signature]*

Համայնքի ղեկավար  
պաշտոնատեղում




*[Signature]*

Ա. Հակոբջանյան


*ՀՀ Սյունիքի մարզի Միսիանի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 31-ի  
 թիվ 03-Ա որոշման հավելվածում կատարվող լրացումները*

h/h	Օտարվող գույքի հասցեն	Օտարվող գույքի մակերեսը, քմ	Օտարման նպատակը	Օտարման ժամկետները	Գույքի օտարման մեկնարկայի ն գինը ՀՀ դրամով՝ ըստ գոտիների	Հողամասի գործառնական նշանակությունը և կատեգորիան
25	Գայի փողոց 4/49	216	ավտոտնակ կառուցելու	II կիսամյակ	263800	բնակավայրերի բնակելի կառուցապատման
26	Գայի փողոց 4/50	102	ավտոտնակ կառուցելու	II կիսամյակ	124600	բնակավայրերի բնակելի կառուցապատման
27	Գայի փողոց 4/51	102	ավտոտնակ կառուցելու	II կիսամյակ	124600	բնակավայրերի բնակելի կառուցապատման
28	Գայի փողոց 4/52	102	ավտոտնակ կառուցելու	II կիսամյակ	124600	բնակավայրերի բնակելի կառուցապատման
29	Միսիան- Իշխանասար խճուղի 1/2	875	հանգստի գոտի կառուցելու	II կիսամյակ	1068380	բնակավայրերի հասարակական կառուցապատման
30	Միսիան- Իշխանասար խճուղի 1/3	875	հանգստի գոտի կառուցելու	II կիսամյակ	1068380	բնակավայրերի հասարակական կառուցապատման
31	Իսրայելյան փողոց 6/20	45.2	առևտրի սրահ կառուցելու	II կիսամյակ	130540	բնակավայրերի հասարակական կառուցապատման
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>					<b>2904900</b>	

Աշխատակազմի քարտուղարի օ/ա



Ա. Կարապետյան



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

24 հունիսի 2022 թվականի թիվ 43-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ, 2-րդ պարբերության 3-րդ կետով ու 67-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 10 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. 2022 թվականին բաց դասական աճուրդով օտարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը.
  - 1) Լոտ 25. ք. Սիսիան, Գայի փողոց 4/49 հասցեում գտնվող 216քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը (վկ.՝ 04052022-09-0022, կադ. ծածկ.՝ 09-006-0094-0277) 263800 (երկու հարյուր վաթսուներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ ավտոտնակ կառուցելու նպատակով,
  - 2) Լոտ 26. ք. Սիսիան, Գայի փողոց 4/50 հասցեում գտնվող 102քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը (վկ.՝ 04052022-09-0012, կադ. ծածկ.՝ 09-006-0094-0275) 124600 (մեկ հարյուր քսանչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ ավտոտնակ կառուցելու նպատակով,
  - 3) Լոտ 27. ք. Սիսիան, Գայի փողոց 4/51 հասցեում գտնվող 102քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը (վկ.՝ 04052022-09-0012, կադ. ծածկ.՝ 09-006-0094-0278) 124600 (մեկ հարյուր քսանչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ ավտոտնակ կառուցելու նպատակով,
  - 4) Լոտ 28. ք. Սիսիան, Գայի փողոց 4/52 հասցեում գտնվող 102քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը (վկ.՝ 04052022-09-0003, կադ. ծածկ.՝ 09-006-0094-0276) 124600 (մեկ հարյուր քսանչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ ավտոտնակ կառուցելու նպատակով,

- 5) Լոտ 29. ք. Սիսիան, Սիսիան-Իշխանասար խճուղի 1/2 հասցեում գտնվող 874քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը (վկ.՝ 22122021-09-0021, կադ. ծածկ.՝ 09-006-0218-0025) 1068380 (մեկ միլիոն վաթսունութ հազար երեք հարյուր ութսուն) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ հանգստի գոտի կառուցելու նպատակով,
- 6) Լոտ 30. ք. Սիսիան, Սիսիան-Իշխանասար խճուղի 1/3 հասցեում գտնվող 874քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը (վկ.՝ 22122021-09-0027, կադ. ծածկ.՝ 09-006-0218-0026) 1068380 (մեկ միլիոն վաթսունութ հազար երեք հարյուր ութսուն) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ հանգստի գոտի կառուցելու նպատակով,
- 7) Լոտ 31. ք. Սիսիան, Իսրայելյան փողոց 6/20 հասցեում գտնվող 45.2քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը (ծածկ.՝ 09-006-0107-0074) 130540 (մեկ հարյուր երեսուն հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ առևտրի սրահ կառուցելու նպատակով,

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -10

Դեմ 0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ Ա




ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ Հ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.




ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.


ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.



ՀՈԿԱՆՆԻՍՅԱՆ Գ.



ՀՈԿԱՆՆԻՍՅԱՆ Է.




ՄԻՐԱԽԱՆՅԱՆ Ա.




ՊՈՂՈՍՅԱՆ Վ.



Համայնքի ղեկավարի պաշտոնակատար

Ա. Հակոբջանյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄ**

24 հունիսի 2022 թվականի թիվ 44-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ  
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման կարգի 46.2 կետի ա) ենթակետը և 2007 թվականի օգոստոսի 9-ի թիվ 980-Ն որոշումն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, — դեմ, — ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. 2022 թվականին առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրել Սիսիանի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի ընդհանուր օգտագործման, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված, Ռ. Իսրայելյան փողոց թիվ 39/60 հասցեի 20քմ հողամասը (ծածկագիր՝ 09-006-0109-0098, վկ.՝ 04052022-09-0026) հանրային սննդի ոլորտում գործունեություն ծավալելու նպատակով, 5 տարի ժամկետով, 1քմ հողամասի տարեկան վարձավճարը՝ 2500 ՀՀ դրամ:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9

Դեմ 0

Ձեռնպահ -0

ԱՌՎՔԵԼՅԱՆ Հ.Ա.

ԱՌՎՔԵԼՅԱՆ Հ.Հ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

*[Handwritten signature]*

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

*[Handwritten signature]*

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.

*[Handwritten signature]*

ՀՈԿԱՆՆԻՄՅԱՆ Գ.

*[Handwritten signature]*

ՄԻՐՁԱԽԱՆՅԱՆ Ա.

*[Handwritten signature]*

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.


*[Handwritten signature]*

Հասայնքի ղեկավար  
պաշտոնակատար



*[Handwritten signature]*

Ա. Հակոբջանյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

24 հունիսի 2022 թվականի թիվ 45-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ԹԻՎ 06-Ա ՈՐՈՇՈՒՄՆ  
ԱՆՎԱԿԵՐ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 38-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 31-ի «Անշարժ գույք նվիրելու մասին» թիվ 06-Ա որոշումը:
2. Սույն որոշումն անվավեր է ճանաչվում ընդունման պահից:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Լ.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Ը.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.

ՀՈԿԱՆՆԻՍՅԱՆ Բ.

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.


ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

Համայնքի ղեկավարի  
պաշտոնակատար



Ա. Հակոբջանյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

24 հունիսի 2022 թվականի թիվ 46-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ԹԻՎ 07-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱԿԵՐ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 38-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 31-ի «Անշարժ գույք նվիրելու մասին» թիվ 07-Ա որոշումը:
2. Սույն որոշումն անվավեր է ճանաչվում ընդունման պահից:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

Համայնքի ղեկավարի  
պաշտոնակատար



Ա. Հակոբջանյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄ**

24 հունիսի 2022 թվականի թիվ 47-Ա

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի առաջին մասով ու 596-րդ հոդվածով, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային վիզաների վարչության Սիսիանի անձնագրային բաժանմունքի թիվ 8/46-170 գրությունն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Շաղատ բնակավայր 3-րդ փողոց 73-րդ շենք թիվ 3 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ (վկ. 15032019-09-0017) բնակարանը, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով նվիրել նույն բնակարանի բնակիչներ՝ Արմենուհի Արամի Հարությունյանին, Աղվան Ավետիսի Հարությունյանին, Լիլիթ Աղվանի Հարությունյանին, Գագիկ Աղվանի Հարությունյանին, Ավետիս Գարիկի Հարությունյանին, Մարի Գարիկի Հարությունյանին, Նարեկ Գարիկի Հարությունյանին, Անահիտ Ռուբենի Մնացականյանին, Գարիկ Աղվանի Հարությունյանին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Ա.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Կ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

*[Handwritten signature]*

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

*[Handwritten signature]*

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.

*[Handwritten signature]*

ՀՈԿԱՆՆԻՍՅԱՆ Գ.

*[Handwritten signature]*

ՄԻՐՁԱԽԱՆՅԱՆ Ա.

*[Handwritten signature]*

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.


*[Handwritten signature]*

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար



*[Handwritten signature]*

Ա. Հակոբջանյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄ**

24 հունիսի 2022 թվականի թիվ 48-Ա

**ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածով, 608-րդ հոդվածի 1-ին, 616-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով ու 617-րդ հոդվածով և նկատի ունենալով Արմինե Սարգսյանի դիմումն ու համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն հանդիսացող Սիսիան քաղաքի Չարենցի փողոց, թիվ 5/1 հասցեում գտնվող «Աղվան Մինասյանի անվան արվեստի և ստեղծագործության կենտրոն» ՀՈԱԿ-ի շենքից 159քմ մակերեսով տարածքը (համաձայն հատակագծի), 1 տարի ժամկետով, վարձակալական հիմունքներով տրամադրել Արմինե Ռոբերտի Սարգսյանին և ամսական վարձավճար սահմանել 10000 /տասը հազար/ ՀՀ դրամ:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Ա.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Կ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Բ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

5

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.

ՀՈԿԱՆՆԻՍՅԱՆ Գ

ՄԻՐՁԱԿԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Կ.

*Handwritten signatures and initials in Armenian script.*


Համայնքի ղեկավարի  
պաշտոնակատար



*Handwritten signature of A. Zakharyan.*

Ա. Հակոբջանյան

Հավելված  
 ՀՀ Սյունիքի մարզի  
 Սիսիանի համայնքի ավագանու  
 2022թ. հունիս 24 թիվ 484 որոշման



հատկացվող տարածք 159քմ

Հասցե: Սիսիանի համայնքի ղեկավարի  
պաշտոնատեղում  
 Լ. Լակոբջանյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

24 հունիսի 2022 թվականի թիվ 49-Ա

**ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածով, 608-րդ հոդվածի 1-ին, 616-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով ու 617-րդ հոդվածով և նկատի ունենալով Հովիկ Հովսեփյանի 2022 թվականի մայիսի 18-ի դիմումն ու համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն հանդիսացող Սիսիան քաղաքի Սիսական 44ա հասցեում գտնվող շենքից 21,45քմ մակերեսով տարածքը (համաձայն հատակագծի), 1 տարի ժամկետով, վարձակալական հիմունքներով տրամադրել Հովիկ Գրիշայի Հովսեփյանին՝ դիմի պարամունքներ անցկացնելու համար և ամսական վարձավճար սահմանել 10000 /տասը հազար/ ՀՀ դրամ:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Ա.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Կ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.

ՀՈՎՀԱՆՆԻՅԱՆ Գ.

ՄԻՐՁԱՆՄԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

*Handwritten signatures*

Համայնքի ղեկավարի  
պաշտոնակատ



*Handwritten signature*

Ա. Հակոբջանյան





Հավելված

ՀՀ Սյունիքի մարզի

Սիսիանի համայնքի ավագանու


2022թ. հունիսի 24 թիվ 49-Ո որոշման



հատկացվող տարածք 21,45

Հասցե՝ Կ.Մ. Կոնյանի համայնքի ղեկավարի պալատի հասցե

Ս. Ըսկոբջանյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՄԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

24 հունիսի 2022 թվականի թիվ 50-Ա

**ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածով, 608-րդ հոդվածի 1-ին, 616-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով ու 617-րդ հոդվածով և նկատի ունենալով Նորվարդ Ստեփանի Խաչատրյանի 2022 թվականի հունիսի 1-ի դիմումն ու համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Միսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. ՀՀ Սյունիքի մարզի Միսիան քաղաքի սեփականություն հանդիսացող Շաղատ բնակավայրի 1-ին փողոց, թիվ 6 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքից՝ 77,8քմ<sup>2</sup> մակերեսով տարածքը՝ չօգտագործվող լվացքատան շենքը (համաձայն հատվագծի), 1 տարի ժամկետով, վարձակալական հիմունքներով տրամադրել Նորվարդ Ստեփանի Խաչատրյանին և տարեկան վարձավճար սահմանել 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Ա.


ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Կ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Բ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.



ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ Գ.




ՄԻՐՉԱԽԱՆՅԱՆ Ա.



ՊՈՂՈՍՅԱՆ Վ.



Համայնքի ղեկավար  
պաշտոնատեղա




Ա. Հակոբջանյան

Հավելված

ՀՀ Սյունիքի մարզի

Միսիանի համայնքի ավագանու

2022թ. հունիսի 24 թիվ 50-Ա որոշման



հատկացվող տարածք 77.8քմ

Հաստատվում է համայնքի ղեկավարի  
պաշտոնակատարի կողմից



Լ. Հակոբջանյան



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

24 հունիսի 2022 թվականի թիվ 51-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ, 688-րդ, 689-րդ, 692-րդ, 693-րդ և 694-րդ հոդվածներով ու նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ՝ Ա. Շահբազյանի 2022 թվականի մայիսի 5-ի թիվ ՊՏՄ/13/6696-22 գրությունը և համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

### Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Սյունիքի մարզի, Սիսիանի համայնքի Շաքի բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 1.0հա գյուղատնտեսական այլ հողամասը (կադ. ծածկագիր՝ 09-070-0134-0017) անհատույց և անժամկետ օգտագործման հանձնել Հայաստանի Հանրապետության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Ս.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Գ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

*[Handwritten signature]*

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

*[Handwritten signature]*

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.

*[Handwritten signature]*

ՀՈԿԿԱՆՆԻՅԱՆ Գ.

*[Handwritten signature]*

ՄԻՐՁԱԽԱՆՅԱՆ Ա.

*[Handwritten signature]*

ՊՈՂՈՍՅԱՆ Ը.

*[Handwritten signature]*

Համայնքի ղեկավար  
Ապաշտոնանկությամբ



*[Handwritten signature]*

Ա. Հակոբջանյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

24 հունիսի 2022 թվականի թիվ 52-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՌԻՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ  
ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով ու 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի թիվ 1023-Ն որոշմամբ հաստատված կարգը և 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշումն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն հանդիսացող Սիսիան քաղաքի Գայի փողոց թիվ 12/46 հասցեում գտնվող 20քմ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասն ուղղակի վաճառքի միջոցով 1221x20=24420 (քսանչորս հազար չորս հարյուր քսան) ՀՀ դրամ կադաստրային արժեքով օտարել Տիգրան Վիգենի Կարապետյանին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառնությունների իրականացումը:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Ա.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Կ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.




ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.



ՀՈԿԱՆՆԻՅԱՆ Գ.




ՄԻՐԱԽԱՆՅԱՆ Ա.



ՊՈՂՈՍՅԱՆ Հ.




Համայնքի ղեկավարի  
աշտոնատեղում



Ա. Հակոբջանյան





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

24 հունիսի 2022 թվականի թիվ 53-Ա

### ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի համար մշակված տեղական սոցիալական ծրագրերին որպես առանձին ծրագրեր՝ համաձայն հավելվածի:
2. Հավելվածում ներառված ծրագրերն իրականացնել առաջնահերթության կարգով՝ համապատասխան ֆինանսական ռեսուրսների առկայության դեպքում:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Ա.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Կ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.Բ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.Ս.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.Ս.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.Ս.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.Ս.

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.Ս.

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.Ս.

Համայնքի ղեկավարի  
պաշտոնակատար



Ա. Հակոբջանյան

**Սիսիանի համայնքի սոցիալական ոլորտի ծրագրերը**

**1. Սիսիանի համայնքի սոցիալական կարիքների գնահատում**

Բնակչության թիվ	30415
Տնային տնտեսությունների թիվ	4271
Երեխաների թիվ	6884
«Ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված տնային տնտեսությունների թիվ	601
Համայնքային սոցիալական աշխատողի առկայություն	Այո
ՀԿ-ների թիվը	9

2021թ. հուլիս-օգոստոս ամիսներին «Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ ՀԿ-ն «Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի» և «Ընտանիք և Համայնք» ՀԿ-ի հետ համատեղ Հիֆսվերկ հնթերնեյշնի և Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Ամուր տեղական գործընկերություն և կարող ԲՀԿ-ներ՝ ի նպաստ Հայաստանում ներառական սոցիալական պայտայանության և հաշվետու համայնքների» եռամյա ծրագրի շրջանակներում Սյունիքի մարզի Գորիս, Սիսիան և Տաթև խոշորացված համայնքներում իրականացրել է համայնքների սոցիալական կարիքների ուսումնասիրություն: Կարիքների գնահատումն իրականացնելիս օգտագործվել են փաստաթղթերի ավանդական վերլուծության, փորձագիտական հարցումների, ինչպես նաև ծառայություններից օգտվողների հետ ֆոկլուս-խմբային քննարկումների մեթոդները: Ֆոկլուս-խմբային քննարկումներին մասնակցել են հետևյալ սոցիալական խմբերը՝ աղքատության ընդհանրական նպաստ ստացողներ, տարեցներ, հաշմանդամ երեխա ունեցող անձինք և խառը խմբերի ներկայացուցիչներ: Իրականացվել են նաև խորին հարցազրույցներ վերոնշյալ համայնքների մասնագիտացված կառույցների ներկայացուցիչների հետ:

Թիրախային համայնքներում իրականացված ուսումնասիրության արդյունքում դուրս են բերվել ներքոնշյալ հիմնական ընդհանուր խնդիրները՝ ներառյալ ենթակառուցվածքային կամ տնտեսական բնույթի, որոնք անուղղակի (բացասական) ազդեցություն ունեն սոցիալական դաշտի վրա:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում Սիսիան խոշորացված համայնքում գործունեություն ծավալող պետական և մասնավոր տարբեր կառույցների ներկայացուցիչներից ԳՈՒՄ ՀԿ-ի գլխավորությամբ 2021թ-ին ձևավորվել է միջոլորտային գերատեսչական ցանց, որը, հիմք ընդունելով համայնքում իրականացված սոցիալական կարիքների ուսումնասիրության արդյունքները, մշակել է Սիսիան համայնքի տեղական սոցիալական պլանը:

Սիսիան խոշորացված համայնքում բացահայտված խնդիրներն են՝

**1. Գործազրկություն, ցածր եկամուտ ունեցող ընտանիքներ**

**1.1. Աշխատանք գտնելու հարցում առավել խոցելի են՝**

- **40-ից բարձր տարիք ունեցողները**, հատկապես կանայք, քանի որ գործատուները հիմնականում ցանկանում են աշխատանքի ընդունել ավելի երիտասարդ աշխատողների:
- **Հաշմանդամություն ունեցող անձինք**, քանի որ գործատուները խուսափում են աշխատանքի ընդունել հաշմանդամներին, նույնիսկ աշխատավարձի մասնակի փոխհատուցման պայմանով:
- **Հաշմանդամություն ունեցող անձանց խնամողները**՝ Համայնքում չկան այնպիսի ծառայություններ, որոնք կիրականացնեն հաշմանդամություն ունեցող մարդկանց խնամքը մինչև ընտանիքի անդամը աշխատանքից վերադառնա:

➤ **Երիտասարդները** - Համայնքում առկա աշխատատեղերի սղության և սահմանափակ հնարավորությունների պատճառով երիտասարդները ձգտում են աշխատանք գտնել Երևան քաղաքում:

## **1.2. Ժամանցի ակտիվ շփման կարիքի բավարարման համար հնարավորությունների պակասը**

➤ Տարեցները կարիք ունեն շփման, ինքնաարտահայտման, իրենց գիտելիքներն ու հմտություններն իրացնելու: Այդ պատճառով կարիք են ունենում մի վայրի ու միջավայրի, որտեղ կարող են հավաքվել, զրուցել, մասնակցել որոշակի միջոցառումների, իրենք կատարեն որոշակի աշխատանքներ, իրենց գիտելիքներն ու հմտությունները փոխանցեն երիտասարդներին, սակայն նման հնարավորություն չկա:

➤ Երեխաների և երիտասարդների համար զարգացման և ժամանցի ապահովման հնարավորությունները խիստ անհամապատասխան են պահանջարկին և տեսականու արդիական ձևերին, որոնք հասանելի են Երևանում և մի քանի խոշոր քաղաքներում:

### **Կարիքները վերաբերում են՝**

- արդիական մասնագիտությունների հետ կապված արտադպրոցական խմբակների ստեղծմանը (ծրագրավորում, դիզայն, անիմացիա, ռոբոտաշինություն և այլն),
- կրթական կենտրոնների հիմնմանը,
- երեխաների նախասիրությունների և հետաքրքրությունների բացահայտման համար անհրաժեշտ ու տարբեր հմտությունների զարգացման համար խմբակների ստեղծման անհրաժեշտությանը,
- երիտասարդների համար ոչ ավանդական և ոչ ֆորմալ կրթական հնարավորությունների ստեղծմանը:

## **2. Սոցիալական աջակցության ծառայությունների սակավություն, մարդկանց կարիքներին անհամապատասխանություն, դրանց տեսականու ծածկույթի անբավարարություն, մարչելիության խնդիր**

➤ Սոցիալական անապահով ընտանիքները, որոնք թոշակ կամ նպաստ չեն ստանում և տեղեկացված էլ չեն միանվագ և պարբերաբար տրամադրվող դրամական օգնություն ստանալու կարգի մասին:

*Որքան անապահով է ընտանիքը՝ Եկամուտների տեսակետից և որքան շատ են այդ ընտանիքում տարբեր խոցելիություն ունեցող անձիք՝ հաշմանդամություն, քրոնիկ հիվանդություն, անչափահաս մանկահասակ երեխաներ և այլն, այնքան ցածր է տեղեկացվածությունը գործող աջակցային ծառայությունների և դրանց ընթացակարգերի վերաբերյալ, ինչը հանգեցնում է մարզինսուլացման:*

### **Տես հանդիպման մասնակից**

## **3. Մասնագիտացված ծառայությունների անբավարարություն և ցածր հասանելիություն:**

### **3.1. Մատուցվող սոցիալական ծառայություններից բավարարվածության խնդիրը**

➤ Բոլոր համայնքներում դրամական՝ աղքատության, երեխայի խնամքի համար տրվող և այլն նպաստներից զգտվող շահառուները նշում էին այդ նպաստների չափի՝ կյանքի նվազագույն պայմանների ապահովման համար պահանջվող չափի հետ խիստ անհամապատասխանության խնդիրը, դժգոհ էին նպաստի չափերից այն հիմնավորմամբ, որ այն թույլ չի տալիս ընտանիքի համար որևէ էական հարց լուծել՝ անգամ երեխաների համար նվազագույն սննդապահովման հարցը: Անշուշտ, նույնը վերաբերում էր նաև կենսաթոշակի, հաշմանդամության թոշակի և այլ դրամական աջակցության չափերին:

➤ Հարցվածները դժգոհություն էին հայտնում իրենց տարածքում մասնագիտացված սոցիալական ծառայությունների բացակայությունից/պակասից, մասնավորապես հաշմանդամություն ունեցող

երեխաների, տարեցների, երիտասարդների համար; ինչպես նաև համայնքում զարգացնող/խթանող ծառայությունների անբավարարությունից: Բացի համընդհանրական դպրոց, պոլիտեխնիկա, մանկապարտեզ (ոչ բավարար տեղերով) և գործող մեկ կամ երկու առանձին ծառայությունների, որոնք մատուցվում են ՀԿ-ների կողմից և ըստ էության կայուն չեն, այլ ծառայություններ համայնքներում չկան:

- Խոշորացված համայնքների պարագայում հիմնականում գործող ծառայությունները առկա են հենց վարչական կենտրոնում, մինչդեռ մյուս տարածքներում/գյուղերում խիստ անհամաչափ է ծառայությունների տեղակայումը, իսկ գործող ծառայությունները մոբիլ-արտագնա տարբերակներ չունեն: Ստացվում է, որ ծառայությունների կարիք ունեցող մեծ թվով մարդիկ դուրս են մնում ծառայություններից:
- Համայնքներում առկա է թեքահարթակների խնդիր. համայնքի ոչ բոլոր հատվածներում կան թեքահարթակներ, եղածներն են ճիշտ չեն կառուցված: Համայնքում հաշմանդամություն ունեցող անձանց համար առաջնային խնդիր է նաև հասարակական տրանսպորտի հասանելիության հարցը: Անձինք ուլքեր ունեն հենաշարժողական խնդիրներ, չեն կարողանում համայնքի տարբեր հատվածներ հասնել, քանի որ չկա հարմարեցված հանրային տրանսպորտ:

### 3.2. Մասնագիտական ներուժի խնդիրը համայնքներում

- Միսիան համայնքում հարցվողները նշում էին անբավարար բժշկական կադրերի և մասնագիտացված ծառայությունների պակասի մասին:
- Անհրաժեշտ են լավ վերապատրաստված հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, հատուկ մանկավարժներ, լոգոպեդներ, էրգոթերապևտներ, ֆիզոթերապևտներ:
- **Վերականգնողական ծառայությունների բացակայություն.** Ծառայություններ չկան հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Համայնքում չկան նաև վերականգնողական կենտրոններ, չկան մասնագիտական ծառայություններ հատուկ կարիքներ ունեցող երեխաների և, առհասարակ, նաև մեծահասակների համար:
  - Համայնքում առկա պետական ու մասնավոր տարբեր ծառայությունները մասամբ են անդրադառնում բնակիչների կարիքներին: Բնակչության կարիքները՝ կապված նեղ մասնագիտական առողջապահական, սոցիալական, կրթական, արտադպրոցական ծառայությունների ստացման հետ բավարարված չեն:
- **Ներառականության պակաս.** Հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար բացի մասնագիտական ծառայությունների բացակայությունից, բացակայում է նաև կրթական հաստատություններում ներառական միջավայրը:

### 4. Համայնքի ֆիզիկական պայմանների հետ կապված խնդիրներ

- **Լուսավորության խնդիրը**՝ Հարցվողներից ոմանք նշում էին փողոցների անբավարար լուսավորության խնդրի մասին կամ ընդհանրապես գիշերային լուսավորության բացակայության մասին:
- **Խաղահրապարակների սակավություն/անբավարարությունը**՝ Երեխաները չունեն հարմարեցված խաղահրապարակներ, ոչ բոլոր բակերում են ստեղծված անվտանգ պայմաններ երեխաների խաղալու համար:
- **Թափառող շները հետ կապված հարցերը**՝ Բնակիչները վախենում են երեկոյան ժամերին դուրս գալ տներից, չկա կառույց ԹԿՎԿ, որը կարողանա զբաղվել թափառող շների հարցով:

### 2. Միսիան համայնքի սոցիալական ոլորտի տեսլականը և նպատակները

Միսիան համայնքի սոցիալական ոլորտի տեսլական է համայնքում որակյալ և հասանելի սոցիալական ծառայությունների առկայությունը, որոնք մատուցվում են համայնքում գործող սոցիալ-հոգեբանական կենտրոնի, առողջապահական և կրթական կազմակերպությունների կողմից: Ծառայությունները ուղղված են համայնքի տարբեր սոցիալական խմբերի ներառյալ երիտասարդների, տարեցներ, հատուկ կարիքներ ունեցող համայնքաբնակներ:

Նշված տեսլականին հասնելու համար սահմանվել են հետևյալ նպատակները

- Նպաստել կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխաների մուրացկանության, հանցագործությունների կանխարգելմանը՝ ստեղծելով միջավայր, երեխաների համար, որտեղ նրանք կստանան կրթական աջակցություն, կմասնակցեն կյանքի հմտությունների խմբակների, իսկ ծնողները կներգրավվեն տարբեր դասընթացների՝ ծնողավարման, կենցաղավարություն և այլն:
- Խթանել տարեցների սոցիալական պաշտպանվածությունը՝ տնային սպասարկման և ակտիվ զբաղվածության միջոցով:
- Նպաստել ընտանիքների առաջնային կարիքների գնահատմանը, իրենց ուժեղ կողմերի բացահայտմանը, ընտանիքներում բռնությունների կանխարգելմանը՝ սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոնի կողմից ծառայությունների մատուցման միջոցով:

Հիմք ընդունելով համայնքի սոցիալական ոլորտի տեսլականը և նպատակները՝ արդյունքները և անհրաժեշտ գործողությունները սահմանվել են տրամաբանական հենքի մեթոդաբանությամբ, որոնք ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման հասնելու խնդիրները, արդյունքները և գործողությունները (սոցիալական ոլորտ)

h/h	Խնդիրները	Միջանկյալ արդյունքները	Անհրաժեշտ գործողությունները	Պահանջվող ռեսուրսները
1	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն	<p>Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կարիքները գնահատված են, դրանց հիման վրա կազմվել են անդատական պլաններ և երեխաները կարիքների հիման վրա ստացել են ծառայություններ</p> <p>Ստեղծվել է տարեցների համար ընտանիքում և համայնքում ապրելու բարենպաստ միջավայր</p> <p>Համայնքում մատուցվում են սոցիալ-հոգեբանական ծառայությունների կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին</p>	<ul style="list-style-type: none"> <li>✓ Ծառայությունների մատուցման համար տարածքի բարեկարգում և հարմարեցում</li> <li>✓ Մասնագետների ներգրավում</li> <li>✓ Շահառուների ներգրավման համար ընթացակարգի չափանիշների մշակում</li> <li>✓ Ծառայությունների մատուցման փաթեթի և մեթոդաբանության որոշում</li> <li>✓ Կենտրոնի վերաբերյալ տեղեկատվության տարածում</li> <li>✓ Կենտրոնի և այլ կառույցների միջև համագործակցության մեթոդաբանության ստեղծում, պայմանների մշակում և ֆորմալացում:</li> </ul> <ul style="list-style-type: none"> <li>✓ Տարեցների ռեսուրսների և ուժեղ կողմերի վերլուծություն տնայցերի միջոցով</li> <li>✓ Հմտությունների գործնական կիրառություն/զբաղվածություն/</li> <li>✓ Ծառայությունների մատուցման փաթեթի և մեթոդաբանության որոշում</li> <li>✓ Կենտրոնի վերաբերյալ տեղեկատվության տարածում</li> <li>✓ Կենտրոնի և այլ կառույցների միջև համագործակցության մեթոդաբանության ստեղծում, պայմանների մշակում և ֆորմալացում</li> </ul> <ul style="list-style-type: none"> <li>✓ Տարածքի ընտրություն</li> <li>✓ Աշխատակամի ձևավորում</li> <li>✓ Ընթացակարգի մշակում՝ շահառուների ներգրավման համար</li> <li>✓ Ծառայությունների մատուցման փաթեթի և մեթոդաբանության որոշում</li> <li>✓ Կենտրոնի վերաբերյալ տեղեկատվության տարածում</li> <li>✓ Կենտրոնի և այլ կառույցների միջև համագործակցության մեթոդաբանության ստեղծում, պայմանների մշակում և ֆորմալացում</li> <li>✓ Շահագրգիռ կառույցների և դոնորների հետ շարունակական համագործակցություն՝ ծրագրի կայունության ապահովման նպատակով</li> </ul>	Կամավորներ, Համայնքի մարդկային և մասնագիտական ռեսուրս, բարեգործական կազմակերպություններ, միջազգային դոնորներ, տեղեկատվական նյութեր, գույք

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 1.**  
**«Կյանքի դժվարին վիճակում գտնվող երեխաների համար կյանքի որակի բարելավմանը նպաստող հասանելի ծառայություններ»**  
 (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը							
Ծրագրի անմիջական նպատակ	Նպաստել կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխաների մուրացկանության, հանցագործությունների կանխարգելմանը՝ ստեղծելով միջավայր, երեխաների համար, որտեղ նրանք կստանան կրթական աջակցություն, կմասնակցեն կյանքի հմտությունների խմբակների, իսկ ծնողները կներգրավվեն տարբեր դասընթացների՝ ծնողավարման, կենցաղավարություն և այլն							
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	Ծառայությունից օգտվող շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
		2021	2022	2023	2024	2025	2026	
		-	120	120	130	130	130	
	1. Ծառայության միջոցով լուծվել են շահառուների խնդիրները	Շահառուների խնդիրների հաղթահարման մակարդակ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2021	2022	2023	2024	2025	2026
			-	60%	60%	65%	65%	70%
	2. Կենտրոնում ներգրավված են հմուտ մասնագետներ	Մասնագետների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2021	2022	2023	2024	2025	2026
			-	5	7	7	10	10
	3. Ավագ դպրոցի երեխաները ստանում են մասնագիտան կողմնորոշման ծառայություններ	Երեխաների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2021	2022	2023	2024	2025	2026
			-	40	40	50	50	55
Ծրագրի հիմնական գործողությունները	<ul style="list-style-type: none"> <li>✓ Ծառայությունների մատուցման համար տարածքի բարեկարգում և հարմարեցում</li> <li>✓ Մասնագետների ներգրավում</li> <li>✓ Շահառուների ներգրավման համար ընթացակարգի չափանիշների մշակում</li> <li>✓ Ծառայությունների մատուցման փաթեթի և մեթոդաբանության որոշում</li> <li>✓ Կենտրոնի վերաբերյալ տեղեկատվության տարածում</li> <li>✓ Կենտրոնի և այլ կառույցների միջև համագործակցության մեթոդաբանության ստեղծում, պայմանների մշակում և ֆորմալացում:</li> </ul>							
Ծրագրի բյուջեն	15 մլն դրամ							
Ծրագրի իրականացման համար	Ծառայության կազմակերպման համար տարածք, սոցիալական ծառայության մասնագետներ							

անհրաժեշտ ավել ռեսուրսներ	
Ծրագրի հիմնական ռիսկերը	Բնակչության շրջանում ընտանեկան խնդիրների մասին չբարձրաձայնելը, երեխաների ներառումը:
Ծրագրի հիմնական չահառուները	Խոցելի ընտանիքների երեխաներ
Ծրագրի սկիզբ և ավարտ	2022-2027
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Ըստ պաշտոնական վիճակագրության՝ Սիսիանում աղքատության մակարդակը 25 տոկոս է: Այս ցուցանիշը ավելացել է ԼՂ հակամարտության և Կովիդ 19-ի արդյունքներով պայմանավորված:</p> <p>Արդյունքում ամեն 4-րդ ընտանիք ունի անկանոն եկամտի աղբյուր, հաճախ ծնողներն ի վիճակի չեն հոգալ երեխաների կարիքները, բավարար ուշադրություն չեն դարձնում նրանց կրթությանը և այդ ամենը հաճախ իրենց մտածելակերպի պատճառով:</p> <p>Ծնողների մեծ մասը չունեն ծնողավարման հմտություններ, չեն գնահատում սոցիալական և կյանքի հմտությունների կարևորությունը, որոնք անհրաժեշտ են երեխաների դաստիարակության համար:</p> <p>Խոցելի ընտանիքների երեխաները հաճախ չունեն, միջավայրի հետ արդյունավետ շփվելու հմտություններ, տեղյակ չեն բարեկեցության տարրական կանոններին, ունեն ցածր ինքնագնահատական, հաճախ ունենում են նաև վարքային խնդիրներ:</p> <p>Երեխաների զարգացման կենտրոնի ծառայությունների տրամադրման արդյունքում համայնքում առկա 400 ԿԴԻԳ երեխաներից տարեկան 120 երեխա կստանա կարիքների հիման վրա համարժեք ծառայություն՝ դասապատրաստում, սննդի տրամադրում, երեխաների սոցիալ-հոգեբանական զարգացմանը նպաստող խմբային պարապմունքներ, ծնողների կարողությունների զարգացում դասընթացների միջոցով:</p> <p>Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 նոյեմբերի 2010 թվականի N 1496-Ն որոշումը, որով սահմանվում է վճարովի հիմունքներով հանրակրթական և (կամ) մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի կարգը, նախատեսվում է համայնքի օժանդակությամբ՝ վճարների փոխհատուցման միջոցով, ներգրավել սոցիալապես ընտանիքների երեխաներին լրացուցիչ կրթական ծրագրերում:</p> <p>Նման ծրագրերի առկայությունը կլուծի երեխաների ուսման առաջադիմության, ինչպես նաև երեխաների ժամանցի հար: Երեխաները կստանան լրացուցիչ կրթական ծառայություններ, ձեռք կբերեն նոր գիտելիքներ, հմտություններ և կարողություններ, կձևավորվի արժեքային համակարգը:</p> <p>Նման ծառայությունների առկայության անհրաժեշտությունը եղել է ծնողների պահանջով:</p>



**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 2.**

**«Տարեցների համար ընտանիքում և համայնքում ապրելու բարենպաստ միջավայրի ստեղծում  
ու պահպանում»**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	<b>Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը</b>						
Ծրագրի անմիջական նպատակ	Խթանել տարեցների սոցիալական պաշտպանվածությունը՝ տնային սպասարկման և ակտիվ զբաղվածության միջոցով						
	Ծառայությունից օգտվող շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	80	80	90	90	90
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Համայնքում առկա են տարեցների համար հարմարեցված ծառայություններ						
	Ծառայությունների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	3	3	5	5	5
	2. Բնակավայրի բնակիչների համար ծառայությունները հասանելի են						
	Տնայցերի թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	300	400	400	500	500
	3. Համայնքում գործող կառույցների հետ արդյունավետ համագործակցություն						
	Համագործակցող կազմակերպությունների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	5	5	7	7	10
Ծրագրի հիմնական գործողությունները	<ul style="list-style-type: none"> <li>- Տարեցների ռեսուրսների և ուժեղ կողմերի վերլուծություն տնայցերի միջոցով</li> <li>- Հմտությունների գործնական կիրառություն/զբաղվածություն/</li> <li>- Ծառայությունների մատուցման փաթեթի և մեթոդաբանության որոշում</li> <li>- Կենտրոնի վերաբերյալ տեղեկատվության տարածում</li> <li>- Կենտրոնի և այլ կառույցների միջև համագործակցության մեթոդաբանության ստեղծում, պայմանների մշակում և ֆորմալացում</li> </ul>						
Ծրագրի բյուջեն	12 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծառայության կազմակերպման համար տարածք, մասնագետներ						

Ծրագրի հիմնական ուսուցիչները	Տարեցների ներգրավում, տրանսպորտային մատչելիություն
Ծրագրի հիմնական շահառուները	Միայնակ տարեցներ, հատուկ խմբերի տարեցներ
Ծրագրի սկիզբ և ավարտ	2022-2027
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Միսիան խոշորացված համայնքում բնակվում է 4271 ընտանիք: Համայնքում տարեցների թիվը 1800 է, որից 200-ը միայնակ ծերեր են, ովքեր չունեն խնամակալներ, մեկուսացված են ապրում, ունեն շփման, օգնության, աջակցության կարիք:</p> <p>Տարեցներից շատերը չեն կարողանում ինքնուրույն օգտվել ծառայություններից՝ կենսաթոշակ, առողջապահական և այլն:</p> <p>Հիվանդանալու պարագայում չունեն խնամողներ: Չեն մասնակցում մշակութային միջոցառումների, չկա այնպիսի մի տեղ, որտեղ կարող են հավաքվել, գրուցել և կազմակերպել իրենց առօրյան, ինչպես նաև կիսվել իրենց գիտելիքներով ու փորձով:</p>

**Ծ Ր Ա Պ Բ Ի Ա Ն Ձ Ն Ա Պ Ի Ր N 3.**

**«Սոցիալ-հոգեբանական ծառայությունների մատուցում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին»**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	<b>Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը</b>						
Ծրագրի անմիջական նպատակ	Նպաստել ընտանիքների առաջնային կարիքների գնահատմանը, իրենց ուժեղ կողմերի բացահայտմանը, ընտանիքներում բոնությունների կանխարգելմանը՝ սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոնի կողմից ծառայությունների մատուցման միջոցով						
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	Ծառայությունից օգտվող շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	120	120	130	130	130
	1. Ծառայության մատուցման համար հարմարեցված սենյակներ						
	Սենյակների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	2	2	2	2	2
	2. Կենտրոնում ներգրավված են հմուտ մասնագետներ						
	Մասնագետների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
-		5	5	7	7	10	
3. Համայնքի բնակիչները տեղեկացված են և օգտվում են կենտրոնի ծառայություններից							
Կենտրոնի մասին տեղեկացված շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2021	2022	2023	2024	2025	2026	
	-	500	700	750	750	800	
Ծրագրի հիմնական գործողությունները	<ul style="list-style-type: none"> <li>✓ Տարածքի ընտրություն</li> <li>✓ Աշխատակամի ձևավորում</li> <li>✓ Ընթացակարգի մշակում՝ շահառուների ներգրավված համար</li> <li>✓ Ծառայությունների մատուցման փաթեթի և մեթոդաբանության որոշում</li> <li>✓ Կենտրոնի վերաբերյալ տեղեկատվության տարածում</li> <li>✓ Կենտրոնի և այլ կառույցների միջև համագործակցության մեթոդաբանության ստեղծում, պայմանների մշակում և ֆորմալացում</li> <li>✓ Շահագրգիռ կառույցների և դոնորների հետ շարունակական համագործակցություն՝ ծրագրի կայունության ապահովման նպատակով</li> </ul>						
Ծրագրի բյուջեն	17 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար	Ծառայության կազմակերպման համար տարածք, մասնագետներ						

անհրաժեշտ այլ ռեսուրսներ	
Ծրագրի հիմնական ռիսկերը	Համայնքի բնակավայրերի հետ տրանսպորտային հաղորդակցության խնդիրներ
Ծրագրի հիմնական շահառուները	Սոցիալապես անապահով, խոցելի ընտանիքներ
Ծրագրի սկիզբ և ավարտ	2022-2027
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Միսիան համայնքում կա 4271 տնտային տնտեսություն, որից 446 ընտանիք ապրում են առավել խոցելի պայմաններում: Ընտանիքները ստանում են տարատեսակ ծառայություններ և աջակցություններ, որոնք համակարգված և արդյունավետ չեն:</p> <p>Հաճախ աջակցություններ են ստանում այնպիսի ընտանիքներ, որնց իրական կարիքները գնահատված չեն և այդ պահին նրանք այդ աջակցության կարիքը չունեն փոխարենն ունեն այլ ծառայությունների կարիք:</p> <p>Համայնքում ավելացել է ԼՂ կոնֆլիկտից տուժած ընտանիքների թիվը՝ 350 ընտանիք, որը ավելի է նպաստել համայնքում եղած սոցիալական խնդիրների սրմանը:</p> <p>800 անտեսված ընտանիք կա համայնքում:</p> <p>Սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայությունների բացակայության պայմաններում չի կատարվում ընտանիքների կարիքների խորքային գնահատում, որի արդյունքում ծառայությունները լինում են ոչ նպատակային:</p> <p>Մեկ պատուհանի ստեղծման արդյունքում մարդկանց խնդիրները ճիշտ կգնահատվեն և նրանք կուղղորդվեն ստանալու համապատասխան ծառայություն՝ ըստ կարիքի և չի լինի աջակցությունների և ծառայությունների վերածածկ:</p>

Աշխատակազմի քարտուղարի  
ժամանակավոր պաշտոնակատար՝



Ա. Կարապետյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄ**

24 հունիսի 2022 թվականի թիվ 54-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ԹԻՎ 04-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով և 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը բաց մրցույթով վարձակալության տրամադրելու մասին» թիվ 04-Ա որոշման մեջ կատարել լրացումներ և որոշման հավելվածը լրացնել 321-ից 333 կետերով համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառնությունների իրականացումը:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Ա.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Է.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա. *[Signature]*  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ. *[Signature]*  
ՀՈՎՀԱՆՆԻՅԱՆ Գ. *[Signature]*  
ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա. *[Signature]*  
ՊՈՂՈՍՅԱՆ Ա. *[Signature]*

Համայնքի ղեկավար  
Աշոտնույան



*[Signature]*

Ա. Հակոբջանյան

**ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 31-ի  
 թիվ 04-Ա որոշման հավելվածում կատարվող լրացումները**

h/h	Հողի տեսակը	Հողի խումբը	Հողամասի ծածկագիրը	Հողամասի մակերեսը հա	Վարձակալության վարձավճարի մեկնարկային գնի չափ 1հա, դրամ	Հողամասի գտնվելու վայրը (բնակավայրը)
321	ջրովի վարելահող	2-րդ խումբ	09-071-0150	0.12381	9855	Շենաթաղ
322	անջրդի վարելահող	3-րդ խումբ	09-010-0103	0.76926	3570	Ախլաթյան
323	անջրդի վարելահող	4-րդ խումբ	09-105-0127-0049	1,50826	2580	Ույծ
324	անջրդի վարելահող	2-րդ խումբ	09-023-0212-0001	0,59697	5415	Բոնակոթ
325	անջրդի վարելահող	2-րդ խումբ	09-023-0225-0020	0,19129	5415	Բոնակոթ
326	անջրդի վարելահող	2-րդ խումբ	09-023-0213-0001	0,31588	5415	Բոնակոթ
327	արոտավայր	4-րդ խումբ	09-070-0165-0025	2,55167	2580	Շաքի
328	Հնդավոր	4-րդ խումբ	09-105-0128-0008	1,01368	10800	Ույծ
329	անջրդի վարելահող	3-րդ խումբ	09-070-0143	1,16083	3570	Շաքի
330	անջրդի վարելահող	5-րդ խումբ	09-070-0101	2,70777	1470	Շաքի
331	անջրդի վարելահող	4-րդ խումբ	09-070-0144	0,65456	2580	Շաքի
332	անջրդի վարելահող	2-րդ խումբ	09-070-0143	0,31763	5415	Շաքի
333	անջրդի վարելահող	4-րդ խումբ	09-070-0146	1,87703	2580	Շաքի

Աշխատանքային քարտուղարի ժ/պ



Ա. Կարապետյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

24 հունիսի 2022 թվականի թիվ 55-Ա

**ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ  
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածով, 608-րդ հոդվածի 1-ին, 616-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով ու 617-րդ հոդվածով և նկատի ունենալով Սիսիանի համայնքի Աշոտավան բնակավայրի Յփ. 8 շենք, 59Բ բնակարանի բնակիչ Ռուզան Կամոյի Ղազարյանի 2022 թվականի հունիսի 1-ի դիմումն ու համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի (Աշոտավան բնակավայրի) սեփականություն հանդիսացող 5տ տարողությամբ թվով 1 հատ Աշ/ԳԼ-2 գույքային համարով գլանատակառը, 5 տարի ժամկետով, վարձակալական հիմունքներով տրամադրել Աշոտավան բնակավայրի բնակիչ Ռուզան Կամոյի Ղազարյանին՝ (նույն. քարտ 004170726, տրվ՝ 04.06.2014թ., 051-ի կողմից) գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, տարեկան 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ վարձավճարով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ Գ.Ա.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Գ.Կ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.



ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.

ՀՈԿԿԱՆՆԻՅԱՆ Գ.

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Կ.

Համայնքի ղեկավարի  
պաշտոնակատար



Ա. Հակոբջանյան